ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

« 21 » դեկտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-48/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-113-րդ կետերով հայտնում ենք հետևյալը.

1. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 10.12.2015թ. ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 24.11.2015թ. ժամը 17:39-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) թեժ գծին և հայտնել, որ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում

կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցել են «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ա/Ձ): Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 09.11.2015թ.: «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թվով 4 չափաբաժինների մասով և ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, որի արդյունքում ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից, ինչի վերաբերյալ Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 13.11.2015թ. գրությամբ տեղեկացրել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ մասի համաձայն որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի փաթեթը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 17.11.2015թ. սահմանված կարգով ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

Պատվիրատուն 20.11.2015թ. ծանուցել է Ընկերությանը, որ քննության է առել վերը նշված փաստաթղթերը, դրանք գնահատել է ոչ բավարար և մերժել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը՝ պատճառաբանելով, որ հրավերի թիվ 3.2, 3.3, 3.5, 3.6 հավելվածների պահանջների համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում Ընկերության կողմից չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ խնդրելով չեղյալ հայտարարել 19.11.2015թ. թիվ 4-րդ արձանագրության 1-ին կետով կայացված որոշումը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի լրումն 24.11.2015թ. ներկայացրած ահազանգի, 08.12.2015թ. ժամը 14:00-ին ահազանգով հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ն գնային առաջարկը ներկայացրել է՝ նշելով սխալ ծածկագիր՝ կից ներկայացնելով «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի կողմից 03.11.2015թ. ներկայացրած գնային առաջարկը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 26.11.2015թ. գրությամբ հայտնել է, որ 09.11.2015թ. կայացած «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ ընթացակարգին մասնակցել են երկու

մասնակից՝ «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ն և «Ֆոտոն» ՍՊԸ-ն: Գնումների մասին ՀՀ օրենսդրության և Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին ծանուցվել է, որպեսզի Ընկերությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի փաթեթը: Ընկերությունը որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի փաթեթ ուղարկել է մի գրություն, որտեղ նշվել է, որ Ընկերությունը պատրաստ է Պատվիրատուին մատակարարել ներկայացված տեխնիկական պահանջներին համապատասխան ապրանք, որն, ըստ Պատվիրատուի, անհիմն հայտարարություն է: Ընկերությունը չի ներկայացրել հրավերի համապատասխան հավելվածների՝ «Ֆինանսական միջոցների», «Մասնագիտական փորձառության», «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսների» պահանջների վերաբերյալ փաստաթղթեր, որի պատճառով գնահատող հանձնաժողովը համապատասխան նիստում ոչ բավարար է համարել Ընկերության կողմից ներկայացրած հիմնավորումը և մերժել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը:

Կենտրոնում 2015թ. դեկտեմբերի 8-ին ժամը 12:10-ին կազմակերպված քննարկման ժամանակ Ընկերությունը պնդել է իր դիրքորոշումը և պահանջը:

Ներկայացված բողոքով Կենտրոնը տեղեկացրել է, որ Պատվիրատուն քննարկման ժամանակ ամբողջությամբ առարկել է ներկայացված ահազանգի դեմ և հայտնել, որ իր կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, քանի որ չնայած գնման առարկայի գինը, գնումների պլանի համաձայն, չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը (5.000.000 ՀՀ դրամ), սակայն այս դեպքում էլ Ընկերությունը պարտավոր էր ներկայացնել թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածներով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՝ որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ բացառությամբ նույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում՝

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի

պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,

- շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում***

գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

Կարգի 66-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:

Կարգի 67-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը,*** ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «դ» պարբերության հիման վրա, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Կարգի 68-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը***, ինչպես նաև եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը և հրավերով «տեխնիկական միջոցներ» կամ «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների մասով սահմանված չեն համապատասխան պահանջներ ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության եզրակացության համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 169-Ա հրամանով՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 667-Ա հրամանում կատարվել են փոփոխություններ և հրամանի 1-ին կետը լրացվել է նոր 5.1-րդ ենթակետով, որի «ա» պարբերությամբ հաստատվել են շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով ապրանքների գնման հայտարարության և հրավերի, այդ թվում նաև թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածների տեքստերի օրինակելի ձևերը:

«82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 2-րդ կետի համաձայն՝ «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները համապատասխանում են թիվ «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

• 4-րդ կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն, 2-րդ տեղ՝ «Սամվել Թանգամյան» Ա/Ձ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 105-Ն որոշման 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել «Ֆոտոն» ՍՊԸ-ին, որպեսզի կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը քննության առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 18.11.2015թ. ստացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, այն համարել է ոչ բավարար և մերժել է Ընկերության հայտը, քանի որ Ընթացակարգի հրավերի թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածների պահանջների համաձայն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում Ընկերության կողմից չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված ամբողջական փաստաթղթերը:

Կենտրոնը գտնում է, որ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածով, Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ, 65-րդ կետի 2-րդ ենթակետով և 67-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, ինչի հիման վրա արձանագրության 4-րդ կետով «Ֆոտոն» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով որոշել է Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությունից պահանջել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, այնինչ Ընթացակարգի հրավերի թիվ 3.2 հավելվածի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը***, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն

համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին, իսկ թիվ 3.5 հավելվածի համաձայն՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը,*** ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «դ» պարբերության հիման վրա, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Ինչ վերաբերում է թիվ 3.3 և 3.6 հավելվածներով նախատեսված տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասով որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելուն, ապա, ըստ Կենտրոնի, Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նման պահանջ կարող է սահմանվել միայն նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների դեպքում:

Բացի այդ, եթե նույնիսկ «Ֆոտոն» ՍՊԸ-ից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը պահանջելը լիներ իրավաչափ, ապա Կենտրոնի կարծիքով այս դեպքում էլ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացնելու դեպքում Պատվիրատուն, Կարգի 51-րդ կետի համաձայն, պարտավոր էր ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ինչ վերաբերում է «Ֆոտոն» ՍՊԸ-ի 08.12.2015թ. ահազանգին, ապա Կենտրոնի կողմից «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի կողմից 03.11.2015թ. ներկայացրած գնային առաջարկի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերջինիս կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված գնային առաջարկում ***«82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1»*** ծածկագրի փոխարեն նշվել է ***«82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9»*** ծածկագիրը, որպիսի պայմաններում «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի գնային առաջարկը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին, և Պատվիրատուի կողմից Ա/Ձ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելը նույնպես հանդիսանում է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի

ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Նույն հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

Կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ *քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:*

Նույն ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» և «ե» պարբերությամբ՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է քննության առնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած բողոքը և դադարեցնել՝ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը հրավերով նախատեսված վավերապայմաններին համապատասխան ճանաչելու մասին որոշումը, 12.11.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշումը, 19.11.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4

արձանագրության 1-ին կետով կայացված որոշումը, այն է՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի միջև պայմանագիր կնքված լինելու դեպքում «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 26.11.2015թ. գրությամբ հայտնել է, որ 09.11.2015թ. կայացած «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ ընթացակարգին մասնակցել են երկու մասնակից՝ «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ն և «Ֆոտոն» ՍՊԸ-ն: Գնումների մասին ՀՀ օրենսդրության և Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին ծանուցվել է, որպեսզի ընկերությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի փաթեթը: Ընկերությունը որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի փաթեթ ուղարկել է մի գրություն, որտեղ նշվել է, որ Ընկերությունը պատրաստ է Պատվիրատուին մատակարարել ներկայացված տեխնիկական պահանջներին համապատասխան ապրանք, որն, ըստ Պատվիրատուի, անհիմն հայտարարություն է: Ընկերությունը չի ներկայացրել հրավերի համապատասխան հավելվածների՝ «Ֆինանսական միջոցներ», «Մասնագիտական փորձառություն», «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների պահանջների վերաբերյալ փաստաթղթեր, որի պատճառով գնահատող հանձնաժողովը համապատասխան նիստում ոչ բավարար է համարել Ընկերության կողմից ներկայացրած հիմնավորումը և մերժել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը:

3. ԳԲԽ-48/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-48/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու հայտ է ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

2. «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 2-րդ կետի համաձայն՝ «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները համապատասխանում են թիվ «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:
- 4-րդ կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն, 2-րդ տեղ՝ «Սամվել Թանգամյան» Ա/Ձ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 105-Ն որոշման 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել «Ֆոտոն» ՍՊԸ-ին, որպեսզի կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն, հանձնաժողովը քննության առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 18.11.2015թ. ստացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, այն համարել է ոչ բավարար և մերժել է Ընկերության հայտը, քանի որ Ընթացակարգի հրավերի թիվ 3.2,

3.3, 3.5 և 3.6 հավելվածների պահանջների համաձայն օրենսդրությամբ սահմանված ժամկետում Ընկերության կողմից չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված ամբողջական փաստաթղթերը:

5. «Ֆոտոն» ՍՊԸ-ն 24.11.2015թ. ժամը 17:39-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցել են «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ն: Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 09.11.2015թ.: «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թվով 4 չափաբաժինների մասով և ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, որի արդյունքում ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից, ինչի վերաբերյալ Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը:

6. «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի լրումն 24.11.2015թ. ներկայացրած ահազանգի, 08.12.2015թ. ժամը 14:00-ի ահազանգով հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ն գնային առաջարկը ներկայացրել է՝ նշելով սխալ ծածկագիր՝ կից ներկայացնելով «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի կողմից 03.11.2015թ. ներկայացրած գնային առաջարկը, որտեղ ***«82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1»*** ծածկագրի փոխարեն նշվել է ***«82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9»*** ծածկագիրը:

7. Պատվիրատուն ահազանգի վերաբերյալ Կենտրոնում կազմակերպված քննարկման ժամանակ ամբողջությամբ առարկել է ներկայացված ահազանգի դեմ և հայտնել, որ իր կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, քանի որ չնայած **գնման առարկայի գինը, գնումների պլանի համաձայն, չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը (5.000.000 ՀՀ դրամը)**, սակայն այս դեպքում էլ Ընկերությունը պարտավոր էր ներկայացներ թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածներով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» և «ե» պարբերությամբ, 10.12.2015թ. բողոքարկման գործընթաց է նախաձեռնել ՀՀ գնումների

բողոքարկման խորհրդում՝ խնդրելով դադարեցնել «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը հրավերով նախատեսված վավերապայմաններին համապատասխան ճանաչելու մասին որոշումը, 12.11.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշումը, 19.11.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի միջև պայմանագիր կնքված լինելու դեպքում «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

4. ԳԲԽ-48/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 24.11.2015թ. ժամը 17:39-ին և 08.12.2015թ. ժամը 14:00-ին Կենտրոնի թեժ գծին ներկայացրած ահազանգերը, «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 26.11.2015թ. գրությունը, «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ արձանագրությունները և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 10.12.2015թ. բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ բացառությամբ նույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների, որոնց դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում, իսկ մնացած գնումների դեպքում, եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում՝

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,

- շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Կարգի 65-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը***, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ***ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն*** համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

Կարգի 67-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը,*** ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «դ» պարբերության հիման վրա, ***ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն*** պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը***, ինչպես նաև եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը և հրավերով «տեխնիկական միջոցներ» կամ «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների մասով սահմանված չեն համապատասխան պահանջներ ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացության համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ»

պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ ***առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 169-Ա հրամանով՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 667-Ա հրամանում կատարվել են փոփոխություններ և հրամանի 1-ին կետը լրացվել է նոր 5.1-րդ ենթակետով, որի «ա» պարբերությամբ հաստատվել են շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով ապրանքների գնման հայտարարության և հրավերի, այդ թվում նաև թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածների տեքստերի օրինակելի ձևերը:

Թիվ 3.2 հավելվածի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը***, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

Թիվ 3.5 հավելվածի համաձայն՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը,*** ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «դ» պարբերության հիման վրա, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Կենտրոնը գտնում է, որ «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածով, Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ, 50-րդ կետի, 65-րդ կետի 2-րդ ենթակետով և 67-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Մասնավորապես, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով որոշել է, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի

համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆոտոն» ՍՊԸ-ից **պահանջել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը**, մինչդեռ Կարգի 65-րդ կետի 2-րդ ենթակետի և 67-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է ընդամենը հայտարարություն*** համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու և պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, այլ ոչ թե ***որակավորումը հիմնավորող փաստաթղթեր:***

Վերոհիշյալը սահմանված է նաև թիվ 3.2 հավելվածով, այն է՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը***, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին, և թիվ 3.5 հավելվածով, այն է՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն ***չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը,*** ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Ինչ վերաբերում է թիվ 3.3 և 3.6 հավելվածներով նախատեսված տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասով որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելուն, ապա ըստ Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին կարող են ներկայացվել համապատասխան պահանջներ, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ, ինչը տվյալ դեպքում առկա չէ, իսկ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին կարող են ներկայացվել համապատասխան պահանջներ շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային

փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների դեպքում, որը տվյալ դեպքում նույնպես առկա չէ:

Բացի այդ, եթե նույնիսկ, ըստ Պատվիրատուի, «Ֆոտոն» ՍՊԸ-ից որակավորումը հիմնավորող փաստաթղթեր պահանջելը իրավաչափ է, ապա Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացնելու դեպքում Պատվիրատուն, Կարգի 51-րդ կետի համաձայն, պարտավոր էր ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, ինչը տվյալ դեպքում չի իրականացվել:

Ինչ վերաբերում է «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի կողմից 03.11.2015թ. ներկայացրած գնային առաջարկին, ապա դրա ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերջինիս կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված գնային առաջարկում ***«82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1»*** ծածկագրի փոխարեն նշվել է ***«82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9»*** ծածկագիրը, որպիսի պայմաններում «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի գնային առաջարկը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին, և Պատվիրատուի կողմից Ա/Ձ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելը նույնպես հանդիսանում է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Նույն հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի միջև պայմանագիր չի կնքվել, և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը՝ առաջարկում ենք «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 10.12.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. Դադարեցնել «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով «Սամվել Թանգամյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը հրավերով նախատեսված վարերապայմաններին համապատասխան ճանաչելու մասին որոշումը:

2. Դադարեցնել «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշումը:

3. Դադարեցնել «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշումը, այն է՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

4. «Երևանի Հ. Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» կողմից հայտարարված «82ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը ապօրինի հայտարարելու մասով բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-48/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան